ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

"09" 09 2016 թ. N. 02/12/3753-16

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի նախագահ
Լիանա Դոյդոյանին

Ի պատասխան Ձեր՝ 02.09.2016 թ-ի
թիվ 294-ի 5 հարցման

Հարգելի տիկին Դոյդոյան

ՀՀ Նախագահի 2014 թ. դեկտեմբերի 1-ի ՆՀ-602-Ա հրամանագրով ՀՀ տարածքային կառավարման և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունները միավորվել են և գործել որպես ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն: Վերջինս ՀՀ տարածքային կառավարման և զարգացման ու ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունների է վերակազմակերպվել 2016 թ-ին ՀՀ Նախագահի փետրվարի 24-ի ՆՀ-196-Ա հրամանագրով: Վերոնշյալ պատճառներով մեր կողմից Ձեզ տրամադրվող տեղեկատվությունը վերաբերում է 2014 և 2016 թթ-ին:

1. 2014 թ-ին ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից գնվել է 500 տուփ թուղթ: 2016թ-ի առաջին կիսամյակում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունը գնել է 765 տուփ թուղթ:
2. Թուղթ գնելու նպատակով 2014 թ-ին ծախսվել է 737500 դրամ, 2016թ-ի առաջին կիսամյակում՝ 1028925 դրամ գումար:
3. 2014 թ-ին գնված մեկ տուփ թղթի արժեքը կազմել է 1475 դրամ, 2016թ-ին գնված թղթինը՝ 1345 դրամ:

Հարգանքով՝

Մ.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

Կատարող՝ Հ.Անդրեասյան
Հասարակայնության հետ կապերի բաժին
հեռ.010 511-353